

այլոց պատուիրելով չայլագունել իրենց երեսներն «օտար դեղօք» ի գայթակղութիւն անմիտ երիտասարդաց: Եւ կը կըշտամբէ դարուն «կաւատները», որ «զանմիտ կանանց եւ զարանց տայ ճաշակել զպտուղն մահաբեր մեղաց» (Ընդհ. 52): Ճատ ծանր եւ ընդհանուր կը նկարագրէ Լաստիվերտցին անոնց անկումն իւր օրով, զոր ինք մահմետական տիրապետութեան արդիւնք կը համարի (76), թէեւ մեք այս մասին բոլորովին համամիտ չլինինք իւր հետ: Երիցուհիք անգամ, որոցմէ աւելի պարկեշտութիւն մը կը պահանջուէր, կը մրցէին իրենց միւս պճնասէր սեռակցաց հետ՝ զգեստուց պաճուճանաց, ծարրով իրենց աչերը դեղելու, սնգուրով երեսնին ծաղկելու, եւ «մուշկ եւ ամբար» բուրելու մէջ, ինչպէս կ'իմացնէ մեզ Սոաքել սիւնեցին, նմանեցնելով զիրենք այդ վիճակին մէջ՝ «Որպէս ըզբող փողոց նըստեալ» (Աշդ. 200-1):

Այս եւ այսպիսի վկայութիւնք թէեւ չենբեն մեզ դատել ու դատապարտել ամբողջ հայ կանանին, որոց մէջ առաքինութեան յայտնի օրինակներ ալ շատ կան, բայց կը զգուշացնեն զմեզ անպայման եւ անխտիր լաւատեսութեամբ մը նայելէ անոնց վրայ: Զի սոյնպիսի հրապարակային